Արձանագրություն N 5
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
Протокол № 5
Заседания комиссии электронного аукциона с кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32

Ք. Երևան
Г. Ереван
Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ
օրը՝ 10.03.2026թ.
ժամը՝ 11:00
Место проведения заседания.
Административное здание мэрии Еревана (г. Ереван ул. Аргишти 1), комната 128
день: 10.03.2026
время: 11:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Մելքոնյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Մխիթարյան, Հ. Մխչյան
Հանձնաժողովի քարտուղար ՝	Տ. Մանուկյան
Участвовали	
Председатель комиссии:	С. Мелконян
Члены комиссии:	А. Мхитарян, А. Мхчян
Секретарь комиссии:	Т. Манукян

1. Գնման ընթացակարգի շրջանակներում թիվ 4 արձանագրության 4-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունների շտկման և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերի, սահմանված պահանջներին դրանց համապատասխանության և հայտերի գնահատման մասին

1. Об устранении несоответствий, зафиксированных в пункте 4 протокола № 4, а также о документах, представленных участниками, занявшими 1-е место, об их соответствии установленным требованиям и об оценке заявок.

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՇԻՖԹ», «Օազիս Կոմպյուտեր» և «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊ ընկերությունները սահմանված ժամկետում շտկել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Շտկված փաստաթղթերը բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ՇԻՖԹ», «Օազիս Կոմպյուտեր» և «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.3 Ընդունել ի գիտություն, որ «ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, իսկ «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ամբողջությամբ չի շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի անվանման

սյունակներում 3-րդ չափաբաժնի մասով լրացված է միայն «համակարգիչ ամբողջը մեկում» ձևակերպումը, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ միայն «ջուրը փափկեցնող սարքեր» ձևակերպումը: Մինչդեռ անհրաժեշտ էր ներկայացնել հրավերով պահանջվող ամբողջական և հստակ տեղեկատվությունը:

1.4 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետի և 32-րդ կետի 19-րդ ենթակետի պահանջները, որոշեց «ԱՅՓԻՍԵՔ» և «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

1.5 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

1.1 Принять к сведению, что ООО «ШИФТ», ООО «Оазис Компьютер» и ООО «ПИ-ЛЕНД» в установленный срок устранили несоответствия, зафиксированные оценочной комиссией. Исправленные документы соответствуют требованиям, установленным приглашением.

1.2 В заявках, представленных ООО «ШИФТ», ООО «Оазис Компьютер» и ООО «ПИ-ЛЕНД», имеются все документы, требуемые приглашением, и они соответствуют требованиям приглашения, в том числе представлены полные описания предлагаемых товаров.

1.3 Принять к сведению, что ООО «АЙПИСЕК» в установленный срок не устранило несоответствия, выявленные в результате оценки заявки, а ООО «АРСШИН 91 ГРУП» в установленный срок не полностью устранило несоответствия, выявленные по результатам оценки заявки. В частности, в полном описании предлагаемого товара в графах фирменного наименования, марки и наименования производителя по 3-му лоту указана лишь формулировка «компьютер всё в одном», а по 6-му лоту — только формулировка «устройства для смягчения воды». Между тем необходимо было представить полную и точную информацию, требуемую приглашением.

1.4 Оценочная комиссия, руководствуясь требованиями пункта 42 и подпункта 19 пункта 32 Порядка, утверждённого постановлением Правительства Республики Армения № 526-Н «Об организации процесса закупок» (далее - Порядок), решила признать заявки, представленные ООО «АЙПИСЕК» и ООО «АРСШИН 91 ГРУП», несоответствующими и отклонить их.

1.5 Заявки, представленные участниками, занявшими первое место, были оценены оценочной комиссией через систему следующим образом.

Մասնակցի անվանումը **Название участника**	**Հայտի գնահատականը** **Оценка заявки**
«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ / ООО «Оазис Компютер»/	Բավարար Удовлетворительно
«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ / «ПИ-ЛЕНД» ООО/	Բավարար Удовлетворительно

«ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ /«АЙПИСЕК» ООО	Անբավարար Неудовлетворительно
«ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ / ООО «АРСШИН 91 ГРУП»/	Անբավարար Неудовлетворительно
«ՇԻՖԹ» ՍՊԸ /«ШИФТ» ООО/» ՍՊԸ /«ШИФТ» ООО/	Բավարար Удовлетворительно

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:
Принято решение: за – 3, против – 0.

2. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

2. О выборе участников процедуры закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32» и принятии решения о заключении договора

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ **«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ են ճանաչվել.

-**«ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ-ն 4-րդ** չափաբաժնի մասով, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-**«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ն 5-րդ** չափաբաժնի մասով, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-**«ՇԻՖԹ» ՍՊԸ-ն 1-ին և 7-8-րդ** չափաբաժինների մասով, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

2.3 Անգործության ժամկետի ավարտից հետո մասնակիցներին սահմանված կարգով կներկայացվեն պայմանագիր կնքելու առաջարկներ:

2.1 По решению оценочной комиссии участниками, признанными выбранными в рамках процедуры закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/32», являются:

ООО "ОАЗИС КОМПЮТЕР"– по лоту 4 как, участник, представивший минимальное ценовое предложение, оцененное как соответствующее требованиям,

ООО "ПИ-ЛЕНД" – по лоту 5, как участник, представивший минимальное ценовое предложение, оцененное как соответствующее требованиям,

ООО "ШИФТ" – по лотам 1 и 7-8 как участник, представивший минимальное ценовое предложение, оцененное как соответствующее требованиям,

2.2 Утвердить текст объявления о принятии решения о заключении договора и установить срок бездействия в десять календарных дней.

2.3 По истечении срока бездействия участникам в установленном порядке будут направлены предложения о заключении договора.

3. « Գնման ընթացակարգը 2-3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

3. Об объявлении процедуры закупки несостоявшейся по лотам 2-3 и 6

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտարարել ընթացակարգը չկայացած **2-3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով՝** համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

3.1 Оценочная комиссия решила объявить процедуру несостоявшейся по лотам 2-3 и 6 в соответствии с пунктом 4 части 1 статьи 37 Закона РА «О закупках».

3.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

3.2 Утвердить текст объявления о признании процедуры несостоявшейся и установить срок бездействия десять календарных дней.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ - 0:
Принято решение: за – 3, против – 0.

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Ս. Մելքոնյան С. Мелконян
Հանձնաժողովի անդամներ՝ Члены комиссии:		Ա. Մխիթարյան А. Мхитарян
		Հ. Մխչյան А. Мхчян
Քարտուղար՝ Секретарь комиссии:		Տ. Մանուկյան Т. Манукян